# ԴԱՍ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Հայտնություն՝ եզակի, ոչ թե հոգնակի

«Նա պիտի փառավորի Ինձ», Հովh. 16:4

- Հին Կտակարան – Քրիստոսը մարգարեության մեջ
  - Ահա Նա Գալիս է
- Ավետարանները – Քրիստոսը պատմության մեջ
  - Ահա Նա մահացավ
- Գործք – Քրիստոսը Եկեղեցում
  - Ահա Նա կենդանի է
- Թղթերը – Քրիստոսն առօրյա կյանքում
  - Ահա Նա փրկում է
- Հայտնություն – Քրիստոսը գալիք փառքի մեջ
  - Ահա Նա թագավորում է

### Ու՞մ տրվեց.
### To Whom Given?

Հիսուս Քրիստոսի հայտնությունը, որ Աստված **Նրան տվեց** ցույց տալու համար **Իր ծառաներին** այն բաները, որոնք շուտով պիտի պատահեն, և Իր հրեշտակի միջոցով ուղարկելով՝ հայտնի դարձրեց Իր Հովհաննես ծառային. որ և վկայեց Աստծո Խոսքը և Հիսուս Քրիստոսի վկայությունը և այն բոլոր բաների մասին, ինչ տեսավ: Հայտնություն 1:1-2:

## Ապոկալիպսիս (Հայտնության գիրքը).
### The Apocalypse

Ամեն բան, որ սկսվեց Ծննդոցում, իր ավարտին է հասնում Հայտնությունում՝ ամբողջական ծրագիր…

- Ներկա դարաշրջանի աղետալի վախճանը
- Թագավորների Թագավորի հրաշափառ հայտնությունն Իր համատիեզերական թագավորությունում
- Սատանայի խորտակումը Abousso-ում (անդունդի մեջ)
- Քրիստոսի հազարամյա թագավորությունը երկրի վրա
- Վերջնական ապստամբությունը և մեղքի ոչնչացումը
- Նոր Երկինք և Նոր Երկիր

## Հայտնություն՝ «Քողազրկումը»
### Revelation: “The Unveiling”

- Ամեն բանի վախճանը
- Միակ գիրքն է, որ հատուկ օրհնություն է խոստանում ընթերցողին
- 404 համարներ պարունակում են մոտ 800 ակնարկներ Հին Կտակարանից
- Այն ներկայացնում է Աստծո Ծրագրի գագաթնակետը մարդու համար

## Եզակի խոստումը.
### A Unique Promise

Երանելի են այս մարգարեության խոսքերը **կարդացողը** և **լսողները**, և սրանում գրվածները **պահողները**. քանի որ մոտ է ժամանակը:

## Երկու հիմնական բացահայտումներ.
## Two Basic Discoveries

1) Աստվածաշունչը բաղկացած է 66 գրքերից, որոնք գրվել են 40 հեղինակների կողմից, որը պարունակում է մի քանի հազար տարվա պատմություն. այն իրենից ներկայացնում է  ամբողջական պատգամի մի համակարգ:

2) Ակնհայտ է, որ այս պատգամի սկզբնաղբյուրը ժամանակի և տարածության մեր չափողականությունից դուրս է գտնվում:

## Կենտրոնական թեման.
## The Central Theme

- Հին Կտակարանը պատմություն է մի Ազգի մասին
- Նոր Կտակարանը պատմություն է մի Մարդու մասին
- Արարիչը Մարդ դարձավ: Նրա հայտնությունը ողջ պատմության Կենտրոնական Իրադարձությունն է:
- Նա մահացավ մեզ գնելու համար և հիմա կենդանի է
- Նրան ճանաչելը մեծագույն պատիվն է: Ահա թե ինչի մասին է ամբողջ Աստվածաշունչը:

## Գրքի հեղինակ Յովհաննեսը.
## John, the Author

- IRENAEUS OF LYON, JUSTIN MARTYR, EUSEBIUS
- Հովհաննեսի Ավետարանը
- Երեք թղթերը (Ա Հովհաննես՝ սիրո քարոզ, Բ Հովհաննես՝ անձնական նամակ Մարիամին (?), Գ Հովհաննես՝ անձնական ուղերձ Գայիոսին):
- Հովհաննեսը ծնվել է Բեթսաիդայում, Զեբեդիոսի և Սողոմեի ընտանիքում, և գալիլիացի ձկնորս էր՝ Պետրոսի և Անդրեասի գործընկերը: Նա սկզբում եղել էր Հովհաննես Մկրտչի աշակերտը և, թվում է, լավ կապեր ուներ (Քահանայապետը, Նիկոդեմոսը)?

Հովհաննեսը փոքր խմբի մեջ էր՝ Այլակերպության լեռան վրա (Մաթ. 17), Հայրոսի աղջկա հարության ժամանակ (Մաթ. 9:18), Ձիթենյաց լեռան քարոզի ժամանակ «Մաթ. 24), Գեթսեմանիում (Մաթ. 26:37), Ստանձնեց Մարիամի խնամքը (Հովհ. 19:26), վերջնական արդյունքում, աքսորից հետո, վերադառնում է Եփեսոս:

## Պատմոս կղզու աքսորը.
## The Patmos Exile

- Պատմոսը փոքր կղզի է, 9.5կմ 16կմ վրա, 64.5կմ հեռու Միլետից և 38,5կմ՝ Թուրքիայի ծովածոցից:
- Հովհաննեսին աքսորել էր Դոմետիանոսը (Ք.Հ. 81-96թթ..), ով Երուսաղեմն ավերած Տիտոսի եղբայրն էր: Ըստ Հիրենեոսի (Ք.Հ. 2-րդ դար), Հովհաննեսը Հայտնության գիրքը գրել է Դոմիտիանոսի թագավորության ժամանակ:
- Հիրենեոսը, Կղեմեսը և Եվսեբիոսը գրում են, որ երբ Դոմետիանոսը մահացավ, Հովհաննեսը վերադարձավ Եփեսոս, այցելեց եկեղեցիները, ավագներ նշանակեց և ամեն բան կարգի բերեց:

## Ինչու՞ մարգարեություն.
## Why Prophecy?

- Հին Կտակարան. 1,845 հղումներ Քրիստոսի՝ երկրի վրա իշխելու վերաբերյալ: Հին Կտակարանի 17 գրքեր այդ դեպքին նշանակություն են տալիս:
- Նոր Կտակարան. 216 գլուխներում կան 318 հղումներ Երկրորդ Գալստյան մասին: Այն նշված է 27 գրքերից 23-ում:

Սակայն, մարդկանց մեծ մասը համարում է, որ ապագան ոչ այլ ինչ է, քան ներկայի ուղղակի շարունակությունը. կյանքը պարզապես նույն ձևով կշարունակվի:

## Վախճանաբանություն.
## Eschatology




## Ոչ-հազարամյակայինի հետ կապված խնդիրներ.
## Amillennial Problems

- Հունարեն “A” նշանակում է ոչ
- Մեսսիական խոստումներ ողջ Հին Կտակարանով մեկ
- Իսրայելի ճակատագիրն Աստծու Ուխտի մեջ
    - Ղուկ. 1:32 - 32 Նա մեծ կ’լինի, եւ Բարձրեալի Որդի կ’կոչուի. եւ Տէր Աստուածը նորա Դավիթ հօր աթոռը կ’տա նորան. եւ նա հաւիտեան կ’թագավորէ Հակոբի տան վրա.

## Յոթական կառուցվածքը. Յոթեր
## The Heptadic Structure: The Sevens

- Յոթ եկեղեցիներ — 1:4, 11, 20, 2:3
- Յոթ կնիքներ — 5:6
- Յոթ փողեր — 8,9
- Յոթ թասեր — 15, 16, 17:1, 21:9
- Յոթ աշտանակներ — 1:12, 13, 20, 2:1
- Յոթ հոգիներ — 1:4, 3:1, 4:5, 5:6
- Յոթ աստղեր — 1:16, 20, 2:1, 3:1
- Յոթ ջահեր — 4, 5
- Յոթ «զույգ տիտղոսներ» — 2, 3
- Յոթ խոստումներ հաղթողներին — 2, 3
- Յոթ եղջյուրներ — 5:6
- Յոթ աչքեր — 5:6
- Յոթ հրեշտակներ — 8:2, 6, 15:1, 6, 7, 8, 16:1, 17:1, 21:9
- Յոթ որոտումներ — 10:3, 4
- Յոթ հազարներ — 11:13
- Յոթ գլուխներ — 12:3, 13:1, 17:3, 7, 9
- Յոթ թագեր — 12:3
- Յոթ հարվածներ — 15:1, 6, 8, 21:9
- Յոթ լեռներ — 17:9
- Յոթ թագավորներ — 17:10, 11

## Յոթ երանություններ
## Seven Beatitudes

- Երանի նրան, ով կարդում է, ու նրանց, ովքեր լսում են այս մարգարեության խոսքերը և պահում են այն բաները… (Հայտ. 1:3)
- Երանելի են այն մեռելները, որոնք Տիրոջով են ննջում (Հայտ. 14:13)
- Երանի նրան, ով արթուն կմնա ու կպահի իր հանդերձները (Հայտ. 16:15)

- Երանելի են նրանք, որ կանչված են Գառնուկի հարսանիքի ընթրիքին (Հայտ. 19:9)
- Երանելի և սուրբ է նա, ով առաջին հարության մեջ բաժին ունի (Հայտ. 20:6)
- Երանի նրան, ով կպահի այս գրքի մարգարեության խոսքերը (Հայտ. 22:7)
- Երանելի են նրանք, որ կատարում են Նրա պատվիրանները (Հայտ. 22:14)

## (Չնկատվող) Յոթեր
## (More Subtle) Sevens

- Յոթ առանձնահատկություններ — 1
- Յոթ նամակների բաժանումներ — 2, 3
- Յոթ դերակատարներ
  - Կինը, արու զավակը, կարմիր վիշապը, յոթ գլխանի գազանը, սուտ մարգարեն, Միքայելը, Գառը
- Դատաստանի յոթ տարիները — 11:3, 12:6,14, 13:5
- Քրիստոսի յոթ «Ես եմ»-ները — 1:8,11,17,18, 21:6, 22:13,16
- Յոթ օրհնաբանությունները երկնքում — 4:9-11, 5:8-13, 7:9-12, 11:16-18, 14:2,3, 15:2-4,
  19:1-6
- Յոթ նոր բաներ — 20, 21
  …և շատ, շատ ավելին — (Յոթ անգամ ավելի շա՞տ)

**Ազատագրման ժամանակները (ժամանակաձևերը, ժամանակահատվածները)**
**Tenses of Redemption**

| | **Անցյալ** | **Ներկա** | **Ապառնի** |
|---|---|---|---|
| **Աստված** (Հայտ. 1:4) | Որ էր (Կող. 1:15, Հովհ. 8:58) | Որ է (Եբր. 7:25) | Որ պիտի գա (Հայտ. 1:7) |
| **Հիսուս Քրիստոս** (Հայտ. 1:5) | Հավատարիմ վկա (Հովհ. 14:1-3, Հովհ. 8:14) | Մեռելներից անդրանիկը (Կող. 1:18-20) | Երկրի թագավորների իշխանը (Մաթ. 25:31,32, Ա Կորն. 15:24,25) |
| **Նրան, որ** (Հայտ. 1:5) | Սիրեց մեզ (Գաղ. 2:20, Հովհ. 3:16) | Իր արյունով մեզ լվաց (Եբր. 7:25, 9:14) | Մեզ դարձրեց թագավորներ և քահանաներ (Ա Պետ. 2:9, Ղուկ. 19:17, **Հայտ. 2:26,26, 5:10, 20:4, 22:5)** |
| Գրիր (Հայտ. 1:19) | Ինչ որ տեսնում ես (Հայտ. 1:12-18) | Այն, որ կա (Հայտ. 2 և 3) | Այն, որ հետո է լինելու (Հայտ. 4-22) |

## «Փրկվելու» երեք ժամանակաձևերը
## Three Tenses of “Being Saved”

- **Փրկվել ենք.** մեղքի պատժից (դատարանից և մեղքի օրենքից)
  - Դիրքային առումով, Եփ. 2:8,9:
  - Կոչվում է **արդարացման** փրկություն:
- **Փրկվում ենք.** մեղքի իշխանությունից
  - Գործնական, Սուրբ Հոգով, րոպե առ րոպե, Հռոմ. 6
  - Կոչվում է **սրբացում**

  Հռ. 6:22 - 22 Բայց հիմա որ մեղքից ազատուած եւ Աստուծո ծառա եղած էք՝ ձեր պտուղն ունեք սրբանալու համար, եւ նորա վերջը հաւիտենական կեանքն է:

- **Կփրկվենք.** մեղքի ներկայությունից
  Կոչվում է «մեր մարմինների ազատագրում», Հռոմ. 8:23

## «Ես Յոգու մեջ էի…»
## “I was in the spirit„”

- «Տիրոջ» օրը Գլ. 1:10
- Երկնքում, գահի մոտ Գլ. 4:2
- Տարվեց անապատ Գլ. 17:3
- Տարվեց լեռան վրա Գլ. 21:10

«Փայլակներ ու որոտներ և ձայներ էին լսվում և երկրաշարժ-?» Գահը (Հայտ. 4:5) Կնիքներ (Հայտ. 8:5), Փողեր (Հայտ. 11:19) և, Թասեր (Հայտ. 16:18):

## Բարձրագույն օրհնաբանություն
## Climactic Doxologies

- Փառք, զորություն (2) Հայտ. 1:6
- Փառք, պատիվ և զորություն (3) Հայտ. 4:11
- Օրհնություն, պատիվ, փառք ու զորություն (4) Հայտ. 5:13
- Օրհնություն, փառք, իմաստություն, գոհություն, պատիվ, զորություն կարողություն (7) Հայտ. 7:12

**Երկրպագություն**
**Worship**

1) Սուրբ, սուրբ, սուրբ — Գլ. 4:8
2) Դու արժանի ես — Գլ. 4:11, 5:8-10
3) Գահի վրա նստողին — Գլ. 5:11-13
4) Փրկությունը մեր Աստծունն է — Գլ. 7:9-12
   Ամեն, օրհնություններ…
5) Աշխարհի թագավորությունները — Գլ. 11:15-18
   Քեզ գոհություն ենք մատուցում
6) Մեծ ու զարմանալի… — Գլ. 15:2-4
7) Չորս ալելուիաները — Գլ. 19:1-8

**Բաներ, ոչ իրենց տեղում**
**Things Out of Place**

- Իսրայել — Երկիր
- Եկեղեցի — Երկինք
- Գառը — Իր գահը
- Սատանան — Կապված

**Երեք կանայք**
**Three Women**

| | | |
|---|---|---|
| Յահվեի կինը | Կինը<br>Հայտ. 12 ում | Իսրայել |
| Կույս հարսնացուն | Քրիստոսի հարսնացուն | Եկեղեցի |
| Պոռնիկը | Խորհուրդ, Բաբելոն | Կինը, նստած գազանի վրա |

## Ծննդոց և Հայտնություն (համեմատություն)
## Genesis vs. Revelation

**Ծննդոց=Սկիզբ, Արարչագործություն**
**Հայտնություն=Ազատագրում, Ամբողջացում**

**Genesis = Beginning; Creation**
**Revelation = Redemption; Completion**

### Ծննդոց

- Երկիրը ստեղծված — 1:1

  Երկիրը վերացած — 21:1

- Արև, լուսին, աստղեր 1:14-16

  Արևի, լուսնի, աստղերի Վերանալը — 8:12

- Արևը՝ ցերեկն իշխելու համար — 1:16

  Արևի կարիք չկա — 21:23

- Խավարը, որ կոչվեց գիշեր — 1:5

  Գիշեր չի լինելու — 22:5

- Ջրերը Նա ծով կոչվեց — 1:10

  Այլևս ծով չի լինելու — 21:1

- Գետ՝ երկրի օրհնության համար — 2:10-14

  Գետ՝ Նոր Երկրի համար — 22:1,2

- Մարդը՝ Աստծո պատկերով — 1:26

  Մարդը՝ առաջնորդված սատանայի պատկերով — 13

- Մեղքի մուտքը — 3

  Մեղքի ավարտը — 21,22

- Անեծքի հայտարարվելը — 3:14-17

  Այլևս անեծք չի լինելու — 22:3

- Մահվան մուտքը — 3:19

  Այլևս մահ չի լինելու — 21:4

- Քերովբեի մասին առաջին հիշատակումը — 3:24

  երովբեի մասին վերջնական հիշատակումը — 19:4

- Մարդը՝ վտարված դրախտից — 3:24

  Մարդը՝ վերականգնված — 22

- Կյանքի ծառը՝ պաշտպանված — 3:24

  Կյանքի ծառը՝ հասանելի — 22:14

- Ցավի ու տանջանքների մուտքը — 3:17

  Այլևս ոչ մի ցավ — 22:4

- Կրոնը, արվեստն ու գիտությունը՝ բաժանված Աստծուց — 4

  Դատապարված, կործանված — 18

- Ներրովթը հիմնում է Բաբելոնը — 10:8-10

  Բաբելոնի անկումը — 17,18

- Աստծո ջրհեղեղը՝ կործանելու չար սերունդը — 6-9

  Սատանայի ջրհեղեղը՝ կործանելու ընտրյալ սերունդը — 12

- Ծիածան՝ Աստծո խոստումը — 9:13

  Ծիածան՝ հիշելու համար — 4:3, 10:1

- Սոդոմ և Եգիպտոս՝ ապականություն, դատաստան — 13, 19

  «Սոդոմ և Եգիպտոս» (Երուսաղեմ) — 11:8

- Համախմբում՝ ընդդեմ Աբրահամի ժողովրդի — 14

  Աբրահամի սերնդի — 12

- Հարսնացու՝ Աբրահամի որդու համար — 24

  Աբրահամի սերնդի համար — 19

- Առաջին Ադամի ամուսնությունը — 2:18-23

  Վերջին ադամի ամուսնությունը — 19

- Խոստացյալ սերունդը՝ Տիրում է թշնամիների դուռը — 29:8 (24:60)

  Խոստացյալ սերունդը տիրում է — 19

- Մարդու տիրակալությունը դադարում է և սատանայի

  տիրակալությունն է սկսում — 3:24՝

  Սատանայի տիրակալությունը դադարում է և մարդու

  տիրակալությունը վերականգնվում է — 22

## Մեկ ամբողջական նախագիծ
## One Integrated Design

Նոր Կտակարանը Հին Կտակարանում ծածկված

Հին Կտակարանը Նոր կտակարանում բացահայտված

## Մարգարեական համարներ
## Prophetic Scriptures

- 8,362 կանխասող համարներ (predictive verses;)
- 1,817 կանխասացություններ (predictions;)
- 737 առանձին բաներ

## Մարգարեական խոշոր թեմաներ
## Major Prophetic Themes

- Իսրայել
- Երուսաղեմ
- Տաճար
- Բաբելոն
- Ռուսաստան (Մագոգ)
- Չինաստանի վերելքը
- Եվրոպական Գերտերությունը
- Էկումենիկ կրոնը
- Համաշխարհային կառավարում
- Օկուլտիզմի (աղանդների) վերելքը

## **Մեր մարտահրավերը**
## **Our Challenge**

Մենք հիմա գտնվում ենք մի ժամանակաշրջանում, որի մասին Աստվածաշունչն խոսում է ավելի, քան որևէ այլ ժամանակաշրջանի մասին պատմության մեջ… ներառյալ այն ժամանակները, երբ Հիսուսը քայլում էր Գալիլիայի ծովափերով և բարձրանում էր Հրեաստանի սարերը:

Հովհաննեսից՝ այն **յոթ եկեղեցիներին,** որ գտնվում են Ասիայում, շնո՜րհ և խաղաղությու՜ն ձեզ Նրանից, որ է, որ էր, և որ պիտի գա, ու **յոթ Հոգիներից,** որ Նրա աթոռի առջև են… Հայտնություն 1:4,5

## **Յոթ Հոգիներ (հրեշտակնե՞ր)**
## **Seven Spirits (Angels?)**

Եվ Տիրոջ (Յահվեյի) Հոգին Նրա վրա պիտի հանգչի՝ իմաստության և հասկացողության Հոգին, խորհրդի և զորության Հոգին, գիտության և Տիրոջ երկյուղի Հոգին:

Եսայի 11:2

Հրեշտակների հայտնության մասին նշված է 74 անգամ (104՝ ՆԿ-ում), ինը անգամ այս **հատուկ յոթը**:

## **Տեսիլք գլուխ 1-ում. Յոթ առանձնահատկություններ**
## **Vision in Chapter 1: Seven Features**

1) **Մազեր, գլուխ**

   Դան. 7:9 - Ես տեսնում էի մինչեւ որ աթոռներ դրուեցան, եւ Հինաւուրցը նստեց. նորա հագուստը՝ ձիւնի պէս սպիտակ, եւ նորա գլխի մազը՝ մաքուր ասրի պէս. նորա աթոռը կրակի բոց, նորա անիւները վառուած կրակ:

2) **Աչքեր**

   Եբր. 4:13 - Եւ չկա մի արարած աներեւոյթ նորա երեսից. բայց ամենն էլ մերկ եւ բաց է նորա աչքերի առաջին որի հետ է մեր բանը:

**Կրակի բոց**

1 Կոր. 3:13 - Ամեն մէկի գործը պիտի հայտնուի. որ օրը կերեւեցնէ. որովհետեւ կրակով պիտի հայտնուի. եւ ամեն մէկի գործը թէ ինչպէս է, կրակը կփորձէ։

Մաղ. 3:2 - Եւ ո՞վ է նորա գալու օրը տանողը, եւ ո՞վ է նորա երեւալու ժամանակին կանգնողը, որովհետեւ նա հալեցնողի կրակին պէս է…

3) **Ոտքեր. քայլելու խորհրդապատկերը**
Պղինձ. դատաստան (Պղնձե օձը, Թվ. 21)

4) **Ձայն, շար ջրեր**

Եզեկ. 43:2, - Եւ ահա Իսրայէլի Աստուծո փառքը գալիս էր արեւելքի ճանապարհից, եւ նորա ձայնը շատ ջրերի ձայնի նման էր, եւ երկիրը լուսավորուեց նորա փառքիցը։

Դան. 10:6 - Եւ նորա մարմինը ոսկեքարի նման էր, եւ նորա դէմքը կայծակի երեւոյթին պէս եւ աչքերը կրակի բոցերի պէս եւ նորա բազուկներն ու ոտները փայլուն պղնձի տեսքի նման, եւ նորա խօսքերի ձայնը ամբոխի ձայնի պէս։

5) **Աջ ձեռք՝ - յոթ աստղեր,**
աշտանակներ — մեջտեղում, Իր ձեռքում

6) **Բերան. երկսայրի սուր.** — Եբր. 4:12, Եփ. 6:17, Ես. 49:2

Դատում է անհավատներին — Հովհ. 12:48

Երկիրը՝ հարվածված — Ես. 11:4

Հակաքրիստոսը՝ ոչնչացած — Բ Թեսաղ. 2:8

7) **Դեմքի արտահայտությունը, արև - Մաթ. 17**

**Աստվածային ուրվագիծ**
**The Divine Outline**

Գրի՛ր, ինչ որ **տեսնում ես** (Քրիստոսի տեսիլքը, գլուխ 1)՝ այն, **որ կա** (յոթ եկեղեցիները, գլուխներ 2,3), և այն, **որ հետո է լինելու** (այն, որ եկեղեցիներից հետո է գալիս, գլուխներ 4-22): Հայտնություն 1:19

## Խորհուրդներն ինքնաբացատրվող են
## The Keys are Self-Contained

Յոթ աստղերի խորհուրդը , որ Իմ աջ ձեռքում տեսնում ես և յոթ ոսկեղեն աշտանակները: Յոթ աստղերը յոթ եկեղեցիների հրեշտակներն են, իսկ յոթ աշտանակները, որ դու տեսնում ես, յոթ եկեղեցիներն են:

Հայտնություն 1:20

## Յոթ եկեղեցիները. «այն, որ կա»
## **The Seven Churches:** "The Things That Are"

Ինչու՞ այս յոթը: Ինչու՞ ոչ Երուսաղեմը, Անտիոքը, Հռոմը, Լյուստրան, Իկոնիան և այլն… («Նա, ով ականջ ունի…» 7 X այլ տեղերում):

1) **Տեղական.** իրական եկեղեցիներ: Հնաբանական հետազոտության է ենթարկվել Սըր Վմ. Ռամսի կողմից… Sir Wm. Ramsey…
2) **Խրատական.** «Եկեղեցիներ»՝ բոլորը: Ուղերձներից յուրաքանչյուրը, որոշակի իմաստով, ուղղված է որևէ եկեղեցու:
3) **Հոմելետիկ** (քարոզչական). «Նա, ով ականջ ունի…»: Վերաբերվում է մեզ:
4) **Մարգարեական.** իրենց հատուկ հերթականությամբ, դրանք ներկայացնում են եկեղեցու պատմությունը: (Դրանք լրացնում են Դանիել 9:26-ի և Հայտ. 12:5,6 (և այլն) միջև եղած բացվածքը):

## Յոթ բնորոշիչ տարրեր յուրաքանչյուր նամակում
## Seven Design Elements In Each of the Letters

- Եկեղեցու անունը
- Քրիստոսի տիտղոսներից մեկը
- Գովասանք
- Անհանգստություն
- Քաջալերանք
- Հաղթության խոստում

- «Նա, ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ինձ ասում եկեղեցիներին»:

**Ինչպես ուսումնասիրել (սերտել-?)**
**How to Study**

- Աղոթք և հաղորդակցություն Հեղինակի հետ
- Ենթադրություններ
- Նշումներ անել
- Օգնություններ (Էգզեգետիկ (exegetical) և մեկնաբանական)

**Հաջորդ դասի համար**
**For the Next Session**

- Կարդա ամբողջ գիրքը
- Ուշադիր ուսումնասիրիր գլուխ 1-ը. նշիր 1-ին գլխի առանձնահատկությունները: Ի՞նչ են խորհրդապատկերում յոթ աշտանակները: Գրիր մի քանի եկեղեցիներ, որոնք այս յոթի մեջ նշված չեն: Ինչու՞ այս յոթը: